ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<14>> փետրվարի 2013թ. N 114

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Շիրազի փողոցի N3ա տան բնակիչ Քրիստինե Պետրոսյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի փետրվարի 6-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Քրիստինե Պետրոսյանին հատկացնել 40000/քառասուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Ա. Հովհաննիսյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ.ՄԱՐՏԱԴՅԱՆ